ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԾԻՐՈՒՄ

ՔՐԻՍՏԻՆԷ ՆԱՋԱՐԵԱՆ
kristnajaryan@gmail.com

Ժամանակակից հասարակութեան զարգացման գլխաւոր շարժիչ ուժն է կրթութիւնը, որի կատարելագործման համար էական տեղ է զբաղեցնում բարեփոխումը: Իր բոլոր դրական որակներով հանդերձ կրթութիւնը կարիք ունի հետեւողական բարեփոխումների:

Քանի որ Եւրոպան իրականացրել է Եւրոպական Բարձրագոյն Կրթական Միասնական Տարածքի (ԵԲԿՄՏ) ստեղծումը, ապա Հայաստանի Հանրապետութիւնը եւս որպէս զարգացող պետութիւն չէր կարող իր մասնակցութիւնը չբերել այս բարեփոխումներին, որովհետեւ որակեալ եւ գերազանց գիտելիքի հասնելու միակ իրական ուղին միջազգայնօրէն մրցունակ կրթական համակարգի ստեղծումն է, իսկ կրթական բարեփոխումներն առանց այդ համակարգուած գործընթացի արդիւնաւէտ չեն ընթանայ:

Յօդուածի նպատակն է՝ վերլուծել ՀՀում ընթացող եւ իրականացուող բարեփոխումները: Ուսումնասիրութեան նիւթ ենք դարձրել բուհերի հարթակը եւ, որպէս բարեփոխումների մէկ ու առանձին օղակ համակողմանի հետազօտել Բոլոնիայի գործընթացը[1]:

ՀՀ կրթական համակարգն արտացոլում է կրթութեան նկատմամբ ազգի աւանդական վերաբերմունքի պահպանումը, կրթադաստիարակչական արդի խնդիրները, կրթութեան կառավարման գործընթացի մասնակիցների դերն ու նշանակութիւնը: ՀՀ կրթական համակարգը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու միջոցով է հնարաւոր կրթութեան որակի ապահովումը, միջազգային շուկայի պահանջների բաւարարումը, տնտեսական վերելքն ու հասարակութեան բարգաւաճումը:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բարձրագոյն մասնագիտական կրթութեան համակարգը, չնայած անցումային ժամանակաշրջանի (1991-1997) բազմաթիւ հիմնահարցերի, կարողացել է յարմարուել զարգացման նոր պայմաններին եւ ոչ միայն պահպանել, այլեւ ընդլայնել իր գործունէութեան սահմանները: Երկրի ապագայ արդիւնաւէտ զարգացման համար մասնագիտական կրթութեան համակարգի կարեւորութիւնը կարեւոր եւ անյետաձգելի են դառնում դրա համալիր բարեփոխումները:

ՀՀ բարձրագոյն մասնագիտական կրթութեան բարեփոխումների խնդրով քայլեր ձեռնարկուել են դեռեւս անկախութեան տարիներից (1991-97):

ԽՍՀՄի փլուզումից յետոյ 1991-94ի տնտեսական խորը ճգնաժամը կրթութեան համակարգի զարգացման ու վերակառուցման հնարաւորութիւնները

հասցրեց նուազագոյնի՝ թելադրելով հիմնականում գոյապահպանման ծրագրեր: Պետական ֆինանսաւորման պակասի հետեւանքով բուհերի հնարաւորութիւնները սահմանափակուեցին, բնակչութեան թիւի կրճատումով նուազեց ուսանողների թիւը, որոնք, սակայն չխոչընդոտեցին ՀՀ մասնագիտական կրթութեան համակարգի գործընթացը[2]: 90ականների սկզբին որդեգրուեց վճարովի ուսուցման համակարգը: Սկսեց ձեւաւորուել ոչ-պետական բուհական համակարգը: ՀՀում աստիճանաբար ձեւաւորուեց բուհական մերօրեայ համակարգը՝ աւանդական պետական բուհեր, միջպետական համաձայնագրերով հիմնադրուած միջպետական բարձրագոյն դպրոցներ եւ ոչ-պետական (մասնաւոր) բարձրագոյն դպրոցներ:

Հարկ է նշել, որ մինչ ՀՀին՝ Եւրոպայի Խորհրդին անդամակցելը ԵՊՀն 1988ին ստորագրել էր արդի գործընթացների սկիզբ հանդիսացող փաստաթղթերից մէկը՝ «Համալսարանական Ազատութիւնների Խարտիա»ն, գործում էին նաեւ բարձրագոյն կրթութեան համակարգի բարեփոխումներին աջակցող միջպետական, միջբուհական համաձայնագրեր[3]: Հետեւաբար, միջազգայնացման ձգտումները ՀՀ բարձրագոյն կրթութեան համակարգում ի յայտ են եկել Բոլոնիայի հռչակագրի պաշտօնական մեկնարկից շատ աւելի վաղ՝ անկախ պետականութեան վերահաստատման առաջին օրերից:

Բարձրագոյն կրթութեան երկաստիճան համակարգը (բակալաւրիատ, մագիստրական) մեզ մօտ առաջին անգամ ներմուծուել է Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանում (ՀՊՃՀ)՝ դեռեւս 1992ին: Յետագայ տարիներին երկաստիճան համակարգը ներդրուել է նաեւ ՀՀ այլ պետական բուհերում՝ ԵՊՀ (1995), Հայկական Գիւղատնտեսական Ակադեմիա (ՀԳԱ) (1998), մագիստրոսի կրթական ծրագրով է սկսել իր գործունէութիւնը Հայաստանի Ամերիկեան Համալսարանը՝ 1992ին:

Բարձրագոյն կրթութեան երկաստիճան կառուցուածքը եւ բակալաւրի, մագիստրոսի ու հետազօտողի որակաւորման աստիճանները օրէնսդրօրէն ամրագրուել են «Կրթութեան Մասին» ՀՀ օրէնքում՝ ընդունուած ԱԺ կողմից 1999 Ապրիլի 14ին, որն էլ հենց հիմքը դրեց համակարգում ընթացող բարեփոխումների[4]: «Կրթութեան Մասին» ՀՀ օրէնքը առաջին անգամ որպէս պետական քաղաքականութեան սկզբունք ամրագրեց միջազգային կրթական համակարգում համարկուելու Հայաստանի մտադրութիւնը[5]:

Այսպիսով՝ կարեւորելով բարեփոխումների անհրաժեշտութիւնը ՀՀ բուհերում, ՀՀն հաստատուն եւ վճռորոշ քայլեր կատարելու անհրաժեշտութիւն տեսաւ յատկապէս այս ոլորտում: Եւ դա բնական է, քանի որ հայ ժողովրդի ողջ պատմութեան ընթացքում կրթութիւնն ու գիտութիւնը մշտապէս արժեւորուել եւ կարեւոր դերակատարութիւն են ունեցել:

ՀՀ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

ՀՀ կրթական ոլորտում արդիւնաւէտ կերպով մշակուել եւ մինչ օրս իրականացւում են բարեփոխման մի շարք ծրագրեր, որոնք ընթանում են

կրթական համակարգում հաստատութիւններին ինքնավարութիւն տալու, կրթական նորանոր ծրագրերի մշակման, ներդրման, սովորողների կրթական բոլոր պահանջների բաւարարման ուղղութեամբ:

ՀՀում ներկայումս բարձրագոյն մասնագիտական կրթութիւնն իրականացուում է պետական բուհերում՝ անվճար եւ վճարովի հիմունքներով:

Վճարովի համակարգում անապահով ընտանիքների ուսանողների վարձավճարների հարցում մեծապէս օժանդակում են բարեգործական եւ հասարակական ինչպէս հայաստանեան, այնպէս էլ՝ արտասահմանեան ամենատարբեր կազմակերպութիւններ: Այս մշակոյթը եւս կրթութիւնը խթանող եւ արժեւորող գործընթաց է, որը նպաստում է կրթութիւն ստանալու ցանկութիւն, սակայն հնարաւորութիւն չունեցող ուսանողներին չհրաժարուել իրենց նպատակներից եւ որակեալ մասնագէտ լինելու հարցում լինել առաւել պատասխանատու:

ՀՀում սահմանւում է բարձրագոյն մասնագիտական կրթութեան երկաստիճան որակաւորման համակարգ հետեւեալ որակաւորումներով.- առաջին աստիճանում՝ բակալաւրի, երկրորդ աստիճանում ՝ մագիստրոսի[6]:

Ըստ «Կրթութեան Մասին» օրէնքի՝ բարձրագոյն կրթութեան նպատակը մասնագէտների պատրաստումն ու վերարտադրումն է, միջնակարգ ընդհանուր միջին մասնագիտական կրթութեան հիմքի վրայ՝ անձի կրթութեան զարգացման պահանջմունքների բաւարարումը[7]:

Դեռեւս 1999 Յունիսի 19ին Իտալիայի Բոլոնիա քաղաքում Եւրոպայի 29 երկրների բարձրագոյն կրթութեան նախարարներ ստորագրեցին մի հռչակագիր՝ «Գիտելիքի Եւրոպա»: Այն ընկերային եւ մարդկային զարգացման անփոխարինելի գործօն էր, ինչպէս նաեւ եւրոպական հասարակութեան համախմբման եւ հարստացման բաղադրիչ[8]:

Այս գործընթացն ունէր կարեւորագոյն նպատակ՝ ստեղծել Եւրոպական Բարձրագոյն Կրթութեան Տարածք[9]:

Ի սկզբանէ հռչակագիրը պարունակում էր 6 հիմնական կէտ, որոնք էին.-

- Կրթութեան որակաւորման աստիճանի համակարգի ընդունում.
- Երկաստիճան համակարգի ներդրում.
- Կրեդիտային (ուսանողի ծանրաբեռնուածութեան չափման միաւոր) համակարգի ներդրում.
- Կրթութեան որակի վերահսկողութիւն.
- Ուսանողների եւ դասախօսների շարժունութեան ապահովում.
- Կրթութեան եւրոպական համակարգի գրաւչութեան ապահովում:

Այնուհետեւ՝ 2001ին ներմուծուեցին հետեւեալ կէտերը.-

- Յարատեւ կրթութեան կարեւորում.
- Բուհերի եւ ուսանողների ներգրաւում.
- Եւրոպական բարձրագոյն կրթութեան տարածքի գրաւչութեան խթանում:

2003ին աւելացաւ դոկտորական ծրագիրը[10]:

Ցանկացած քաղաքակրթութեան կենսունակութիւնը եւ արդիւնաւէտութիւնը պայմանաւորուած են այն հանգամանքով, թէ որքանով է հրապուրիչ նրա մշակոյթն այլ երկրների համար: Կարեւորելով հայ մշակոյթի եւ կրթութեան գրաւչութիւնը՝ հաստատենք. որքան ՀՀ կրթական համակարգը կարող է եւրոպականի ազդեցութիւնից բարեփոխուել, նոյնքան էլ բազմամշակութային փոխառնչութիւններն անհաւանական արդիւնք գրանցելու հնարաւորութիւն ունեն: Եւ հետեւաբար կրթական բարեփոխումները, փոխլրացնելով միմեանց, կարող են մօտ ապագայում ձեւաւորել այնպիսի միջավայր, որն առաջնային դառնայ ԵԲԿՄՏի ստեղծման եւ ամբողջ աշխարհում եւրոպական բարձրագոյն կրթական համակարգի տարածման գործում: Այդ նպատակներն են.-

1. Ընդունել կրթութեան որակաւորման աստիճանի համակարգ (բակալաւր, մագիստրոս), դիպլոմի միասնական յաւելուածի ներդրում՝ Եւրոպայի քաղաքացիների աշխատանքի տեղաւորման հնարաւորութիւնների ապահովման եւ եւրոպական բարձրագոյն կրթութեան համակարգի միջազգային մրցունակութեան բարձրացման համար:

2. Ընդունել մի համակարգ, որն էապէս հիմնուած լինի երկու գլխաւոր փուլերի վրայ: Երկրոդ փուլը սկսելու համար անհրաժեշտ է յաջողութեամբ աւարտել առաջինը, որը տեւում է առնուազն երեք տարի[11]:

3. Հիմնադրել կրեդիտային համակարգ, ինչպիսին, օրինակ կրեդիտների փոխանցման եւրոպական համակարգն է (ECTS), որպէս ուսանողների շարժունութիւնը խթանող միջոց:

4. Նպաստել շարժունութեան՝ յաղթահարելով ազատ տեղաշարժման արգելքները, յատուկ ուշադրութիւն դարձնելով հետեւեալ հարցերին.-

• ուսանողների համար մատչելի դարձնել ուսուցման եւ վերապատրաստման, ինչպէս նաեւ յարակից ծառայութիւններ ստանալու հնարաւորութիւնները:

• դասախօսների, հետազօտողների եւ վարչական աշխատակազմի համար հաշուի առնել եւրոպական տարածաշրջանում ուսուցման, հետազօտական աշխատանքների եւ վերահաստատման ժամանակահատուածը՝ չանտեսելով օրէնքով սահմանուած իրաւունքները:

5. Համագործակցութիւն կրթութեան որակի ապահովման ասպարէզում՝ մշակելով կրթութեան համեմատելիութեան չափանիշներ եւ մեթոդներ:

6. Նպաստել բարձրագոյն կրթութեան եւրոպական ուղղուածութեանը՝ ուսումնական ծրագրերի մշակման, միջհամալսարանական համագործակցութեան, համատեղ ուսումնական, գիտահետազօտական եւ վերապատրաստման ծրագրերի ուղղութեամբ[12]:

Վերոնշեալ նպատակների իրականացումը կը նպաստի ԵԲԿՄՏն ամրապնդելուն: Հարկ է հաստատել, որ ՀՀ կրթական համակարգի համար մեծ նշանակութիւն ունեցաւ նաեւ «Լիսաբոնի կոնվենցիայի (համաժողով)[13] ստորագրումը» եւ դրա հաստատումը 2004ին[14], այնուհետեւ Հայաստանի Հանրապետութիւնը, Բոլոնիայի գործընթացի անդամ դառնալու համար կատարեց որոշակի նախապատրաստական աշխատանքներ, որից յետոյ՝ 2005 Մայիսի

19ին, ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարը ստորագրեց Բերգէնի հաղորդագրութիւնը եւ դարձաւ Բոլոնիայի գործընթացի պաշտօնական անդամ՝ յանձն առնելով մինչեւ 2010 աւարտել Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքների իրականացումն ըստ գործողութիւնների առանձին ուղղութիւնների եւ մաս դառնալ կազմաւորուող ԵԲԿՏին[15]:

Այսպիսով՝ Բոլոնիայի գործընթացին ՀՀ մասնակցութիւնը բացառիկ հնարաւորութիւն էր՝ վերակառուցելու եւ արդիականացնելու երկրի բարձրագոյն կրթութեան համակարգը եւրոպական չափորոշիչներին համահունչ:

Բոլոնիայի սկզբունքներով իրականացուող բարեփոխումները ՀՀ բուհերի համար ոչ միայն համաշխարհային աշխատաշուկայում դիրքի ամրապնդման, այլեւ Եւրոպայում դրանց դիպլոմների ճանաչման կարեւոր նախապայման էր:

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2003 Սեպտեմբերի 19ին Բեռլինում կայացաւ եւրոպական 33 երկրների բարձրագոյն կրթութեան նախարարների հանդիպում, որտեղ առաջադրուեցին առաջիկայ տարիների նպատակները եւ գերակայութիւնները՝ ԵԲԿՄՏի հիմնման ընթացքն արագացնելու նպատակով եւ որոշուեց ԵԲԿՄՏում օգտագործել կրեդիտների փոխանցման եւ կուտակման համակարգ[16]:

2004 Դեկտեմբերի 14ին ընդունուած «Բարձրագոյն Յետբուհական Մասնագիտական Կրթութեան» (ԲՅՄԿ) ՀՀ օրէնքի 26րդ յօդուածի 5րդ մասով նախատեսուած էր, որ բարձրագոյն կրթութեան համակարգում կրեդիտային համակարգի պարտադիր ներդրումը սկսւում է 2006-07 ուսումնական տարուանից, բայց ՀՀ կրթական համակարգի բուհերի անպատրաստ լինելու պատճառով ԿԳՆն որոշում կայացրեց կրեդիտային համակարգի ներդրումը տեղափոխել 2007-08 ուսումնական տարի[17]: Կրեդիտային համակարգի ներդրման աւարտը նախատեսուած էր 2010-11 ուսումնական տարում:

22 Դեկտեմբեր 2005ին ՀՀ կառավարութիւնը հաստատել է «ՀՀ Բարձրագոյն Կրթութեան Համակարգում Կրեդիտային Համակարգի Ներդրման Մասին» որոշումը, որտեղ ներկայացուած է ՀՀ բուհերի կրեդիտային համակարգին անցման կարգը, սակայն ներկայացուած չէ դրանց իրականացման յստակ ժամանակացոյցը: Համաձայն այդ որոշման՝ կիրառուել է կրեդիտային համակարգի ներդրման կրթափորձ հանրապետութեան 6 բուհերում՝ ԵՊՀում, ՀՊՃՀում, Երեւանի Վ. Բրիւսովի Անուան Պետական Լեզուաբանական Համալսարանում, Հայաստանի Պետական Ագրարային Համալսարանում, Խ. Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանում եւ Երեւանի Պետական Տնտեսագիտական Համալսարանում[18]:

2007 Յունուարից Սեպտեմբեր ամիսներին արդէն իսկ մշակուել էին «Բարձրագոյն Ուսումնական Հաստատութիւններում Ուսման Գործընթացի Կրեդիտային Համակարգով Կազմակերպման Օրինակելի Կարգը», պատրաստ էր մեթոդական ուղեցոյցը, ՀՀ կառավարութեան 30 Օգոստոս

2007ի թիւ 1038 որոշմամբ, հաստատուել էր բարձրագոյն կրթութեան մասնագիտութիւնների նոր ցանկը:

Ինչպէս տեսանք ECTSի գործարկման ու ամբողջական ներդրման ժամկէտերը սահմանուել են ՀՀ օրէնսդրութեամբ եւ մի շարք ենթաօրէնսդրական ակտերով:

Հիմք ընդունելով ՀՀ բարձրագոյն կրթութեան երրորդ աստիճանում փորձնական նպատակով կրեդիտային համակարգի ներդրման մասին ՀՀ ԿԳ նախարարի 2009 Դեկտեմբերի 14ի թիւ 1069-ա/ք հրամանը, նախատեսւում էր 2009-10 ուստարում որոշ բուհերում կրթափորձի կարգով, իսկ 2010-11 ուստարուանից՝ արդէն բոլոր բուհերում երրորդ կրթական մակարդակում (թեկնածուականում) ներմուծել հետազօտողի գիտակրթական ծրագիրը, որը պէտք է կազմակերպուէր կրեդիտային համակարգով[19]:

Դեռեւս 2002ից Բաց Հասարակութեան Ինստիտուտի Հայաստանի Հիմնադրամ (ԲՀԻ ՀՀ) աջակցութեամբ սկիզբ առաւ ECTSի փուլային ներդրման հնգամեայ կրթափորձը ՀՊՃՀում՝ առանձին կրթական ծրագրերի եւ մասնագիտութիւնների ընդգրկումով, այնուհետեւ կրեդիտային կրթափորձը ընդլայնուեց՝ ընդգրկելով ՀՀ մի շարք այլ բարձրագոյն դպրոցներ:

Կրեդիտային համակարգի անցումն արդիւնաւէտ կազմակերպելու համար ԵՊՀի բոլոր 19 մասնագիտութեան՝ բակալաւրի եւ մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար մշակուել, հրատարակուել են *Կրեդիտային Համակարգով Ուսումնառութեան Ուղեցոյց եւ Դասընթացների Տեղեկագիրքը*[20] տեղեկատուական փաթէթներ եւ համապատասխան լազերային սկաւառակներ, որոնք նախատեսուած են ուսումնառութիւնը համալսարանում աւելի նպատակային եւ արդիւնաւէտ դարձնելու համար ուսանողներին տրամադրելու անհրաժեշտ տեղեկատուութիւն՝ մասնաւորապէս կրեդիտային համակարգի հիմնադրոյթների, ուսումնական գործընթացի կազմակերպման եւ գիտելիքների ստուգման ու գնահատման նոր կարգի, առաջարկուող կրթական ծրագրերի կառուցուածքի, բովանդակութեան եւ աշխատածաւալների, ծրագրերի բաղկացուցիչ դասընթացների եւ դրանցով նախանշուած կրթական արդիւնքների, բովանդակութեան ու կրեդիտների վերաբերեալ:

Գծապատկեր 1. Կրեդիտային ECTS Համակարգը Լուծում է Երեք Խնդիր
1. Տարբեր երկրների բուհերի ուսումնական պլանների համապատասխանեցման ապահովում
2. Ուսանողների շարժունութեան հնարաւորութեան ընդլայնում
3. Ակադեմիական ճանաչում

Բոլոնիայի անդամ բոլոր երկրների բարձրագոյն կրթութեան համակարգերն այսօր օգտագործում են ECTSը, կամ գտնւում են անցման շրջանում, կամ էլ օգտագործում են ECTSին համադրելի կրեդիտային համակարգեր:

Այսպիսով, առաջադրուած խնդիրները հիմնականում իրականացուած են. կարող ենք համոզուած նշել, որ ԵՊՀն կարողացել է յաղթահարել ECTS այս խնդիրները:

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԲԱԿԱԼԱՒՐԻԱՏՈՒՄ, ՄԱԳԻՍՏՐԱԿԱՆՈՒՄ ԵՒ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆՈՒՄ

Համաձայն ECTSի օգտագործողի ուղեցոյցի, տարբեր կրթական մակարդակներում որակաւորման շնորհման համար պահանջուող կրեդիտների քանակը կարգաւորւում է Բոլոնիայի որակաւորումների շրջանակով սահմանուած կրեդիտային միջակայքերով: Առաջին մակարդակի որակաւորումների համար պահանջւում է 180-240 կրեդիտ, իսկ երկրորդ մակարդակում՝ 60–120: Երրորդ մակարդակի համար կրեդիտային միջակայքեր սահմանուած չեն: ՀՀ օրէնսդրութեամբ բակալաւրի կրթական ծրագրերի համար սահմանուել է 180-240 կրեդիտ (բժշկական մասնագիտութիւնների համար՝ 300 կրեդիտ), իսկ մագիստրոսի ծրագրի աշխատածաւալը կարող է լինել 60-120 կրեդիտ (բժշկական մասնագիտութիւնների դէպքում՝ 180 կրեդիտ):

ECTS կրեդիտային համակարգում ուսանողի ուսումնական բեռնուածութիւնը ներառում է ոչ միայն լսարանային, այլ նաեւ անհատական աշխատաժամանակը, քննութիւններին պատրաստուելու համար պահանջուող ժամանակը, տեսական գիտելիքների գործնականում կիրառումի աշխատածաւալը եւն.: Օրինակելի կարգը սահմանում է, որ «կրեդիտով սահմանուող ուսումնական բեռնուածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային եւ ինքնուրոյն իրականացուող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թւում՝ մասնակցութիւնը դասախօսութիւններին, սեմինար եւ գործնական պարապմունքներին, աշխատանոցային աշխատանքներին եւ պրակտիկաներին, կուրսային եւ աւարտական աշխատանքների կատարումը, քննութիւններին նախապատրաստուելը եւ յանձնելը, անհատական հետազօտութիւնը ...»[21]:

Կրեդիտային համակարգի իրականացման հիմնական գործառոյթները երկուսն են՝ կրեդիտների կուտակում եւ կրեդիտների փոխանցում:

Կրեդիտների փոխանցումը ենթադրում է ուսումնական ծրագրի բոլոր բաղկացուցիչների աշխատածաւալների կրեդիտների օգնութեամբ արժեւորում եւ այդ կրեդիտների փոխանցման հնարաւորութիւն:

Կրեդիտների կուտակումը ուսանողին տալիս է դասախօսի, դասընթացների եւ դրանց իրացման կիսամեակների ընտրութեան, ինչպէս նաեւ ուսումնառութեան արդիւնաւէտ կարգաւորման հնարաւորութիւն եւ ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայութիւն:

Կրեդիտների փոխանցման եւ կուտակման ECTS համակարգը միասնական համաեւրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիւ ուսումնական բեռնուածքը մէկ ուսումնական տարում գնահատւում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսուած է ԵԲՄԿՏի ուսանողների ձեռք բերած կրթական

արդիունքների արժեւորման, պաշտօնական ճանաչման եւ բուհից բուհ տեղափոխումը դիւրացնելու համար[22]:

ԵՊՀում բակալաւրի եւ մագիստրոսի կրթական աստիճանում առկայ ուսուցման համակարգում սովորող ուսանողի տարեկան ուսումնական բեռնուածութիւնը սահմանւում է 1800 ժամ, որը համարժէք է 60 ECTS կրեդիտի, իսկ հեռակայ ուսուցման համակարգում սովորող ուսանողի համար սահմանւում է տարեկան միջինը 1440 ժամ, որն էլ համարժեք է 48 ECTS կրեդիտի[23]:

Գծապատկեր 2ում ներկայացնում ենք կրեդիտային համակարգը բակալաւրիատի յատակագիծը:

Մագիստրոսի որակաւորման աստիճան ստանալու համար ԵՊՀի ուսանողը ծրագրի կատարման արդիունքում պէտք է յաջողութեամբ լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնուածութիւն, որի համար հաշուարկուած հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պէտք է կազմի առնուազն 12,00[24]:

Գծապատկեր 3ում ներկայացնում ենք մագիստրականի կրեդիտային համակարգի յատակագիծը:

ԵՊՀում հետազօտողի կրթական աստիճանում (ասպիրանտուրայում) ուսանողի տարեկան ուսումնական բեռնուածութիւնը սահմանւում է 1800 ժամ, որը համարժէք է 60 ECTS կրեդիտի[25]: Առկայ ուսուցման համակարգում ընդգրկուած ասպիրանտը ուստարում պէտք է ունենայ 60 կրեդիտ ուսումնական բեռնուածութիւն, իսկ հեռակայում՝ 45 կրեդիտ, գիտաուսումնական լրիւ աշխատածաւալը 180 կրեդիտ է՝ 3 տարի տեւողութեամբ առկայ ուսուցման ձեւով եւ 4 տարի՝ հեռակայ ուսուցման ձեւով[26]:

Գծապատկեր 4ում ներկայացնում ենք կրեդիտային համակարգը ասպիրանտուրայում:



Այսպիսով՝ ECTS կրեդիտային համակարգը այն գործիքամիջոցն է, որը նպաստում է կրթական ծրագրերի մշակման, նկարագրման եւ իրականացման, ինչպէս նաեւ բարձրագոյն կրթութեան որակաւորումների շնորհման գործընթացներին, քանի որ վերջնարդիւնքների վրայ հիմնուած որակաւորումների շրջանակի հետ համատեղուած ECTSի օգտագործումը կրթական ծրագրերը դարձնում է աւելի թափանցիկ եւ դիւրացնում է որակաւորումների ճանաչումը: Միեւնոյն ժամանակ, ECTSը կրեդիտների կուտակման եւ փոխանցման ուսանողակենտրոն համակարգ է, որը հիմնուած է ուսանողի լրիւ ուսումնական բեռնուածութեան հաշուառման, կրթական վերջնարդիւնքների եւ ուսումնական գործընթացների թափանցիկութեան վրայ: Նրա նպատակը ուսանողների շարժունութեան դիւրացումն է որակաւորումների եւ առանձին ուսումնական միաւորների գնահատման եւ ճանաչման միջոցով:

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԿԱՅ ՎԻՃԱԿԸ

Բարձրագոյն կրթութեան ոլորտը կարգաւորող հիմնական օրէնքը ժամանակ առ ժամանակ ենթարկւում է փոփոխութեան, որը հաստատւում է ՀՀ ազգային ժողովում:

Նոր օրէնքի նախագիծը հիմնովին վերափոխում է ինչպէս բարձրագոյն կրթական համակարգի պետական կարգաւորման, այնպէս էլ բուհերի ինքնակառավարման, կրթութիւն-գիտութիւն-տնտեսութիւն, կրթութիւն-շահակիցներ՝ համագործակցութեան ներկայ սկզբունքներն ու կառուցակարգերը[27]:

2017-18 ուսումնական տարում ՀՀում գործունէութիւն են ծաւալել 63 բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ եւ 12 մասնաճիւղեր, որոնցից 25ը՝ հաւատարմագրուած: Բարձրագոյն կրթութեան առաջին աստիճանում բակալաւրի ծրագրով մասնագիտական կրթական ծրագրեր են իրականացրել 24 պետական բուհեր եւ 12 մասնաճիւղեր ու 39 ոչ-պետական բուհեր: Բարձրագոյն կրթութեան մագիստրոսի ծրագրով մասնագիտական կրթական ծրագրեր են իրականացրել 34 պետական եւ ոչ-պետական բուհեր ու 9 մասնաճիւղեր, ինչպէս նաեւ 4 գիտական կազմակերպութիւններ:

Պետական բուհերում բարձրագոյն կրթութեան առաջին աստիճանում բակալաւրի կրթական ծրագրերի մասնակցող ուսանողների 85%ը սովորել է վճարովի, իսկ 15%ը՝ անվճար հիմունքներով: Ընդ որում, անվճար հիմունքներով սովորող ուսանողները ուսանել են բացառապէս պետական բուհերում եւ մասնաճիւղերում:

Բարձրագոյն կրթութեան երկրորդ աստիճանում մագիստրոսի կրթական ծրագրերի մասնակցող ուսանողների թիւը եղել է 11,793, որոնցից 31%ը սովորել է անվճար, իսկ 69%ը վճարովի հիմունքներով:

Ուսանողների համախառն ընդգրկուածութեան ցուցանիշը բարձրագոյն կրթութեան երկրորդ աստիճանում կազմել է 14.8%: Անվճար հիմունքներով սովորող ուսանողների 97%ը ուսանել են բացառապէս պետական բուհերում, դրանց մասնաճիւղերում եւ 3 գիտական հաստատութիւններում[28]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, ՀՀ ներգրաւուածութիւնը Բոլոնիայի գործընթացքում նպաստել է ՀՀ կրթութեան համակարգի համարկմանը եւրոպական բարձրագոյն կրթական տարածքին, որի շնորհիւ ՀՀն համագործակցութեան նոր մակարդակներ է ձեռք բերել եւ ԻԱ. դարին ընդառաջ կարողացել է իր կրթական համակարգը դարձնել մրցունակ, ինչպէս եւրոպական երկրների կրթական համակարգերը: ՀՀն իր կրթական համակարգում ներդրեց բարեփոխումների իրականացման մի ծրագիր, որը խթան հանդիսացաւ կրթական մի շարք բարեփոխումների համար, ինչի շնորհիւ ՀՀ դիպլոմներն աւելի լայն ճանաչում ստացան եւրոպական երկրներում եւ այս բարեփոխումների շնորհիւ ՀՀն դարձաւ Բարձրագոյն Կրթութեան Միացեալ Եւրոպայի մաս:

Պարզ է դառնում, որ ՀՀում կրթական բարեփոխումները Բոլոնիայի օրինակով նոր շունչ հաղորդեցին մերօրեայ երիտասարդութեանը՝ գիտակցուած շրջադարձ կատարելու դէպի նոր իրականութիւն, որտեղ մարդն առհասարակ իրաւասու է անկաշկանդ եւ ազատօրէն արտայայտելու իր մտքերը, որի արդիւնքում զարգանում են վերլուծական միտքը, ինքնատիպ ու համարձակ մօտեցումները:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Վերջին երեսնամեակի ՀՀ կրթական համակարգի բարեփոխումների համապատկերի հետազօտմանն ու ներկայացմանը՝ նախակրթարաններից մինչեւ բուհ, մենք կ'անդրադառնանք մեր յետագայ հրապարակումներում:

[2] *Հայաստանի Ազգային Մրցունակութեան Զեկոյց*, Երեւան, 2010թ., էջ 104:

[3] «Համալսարանական Ազատութիւնների խարտիա», Բոլոնիա, 18 Սեպտեմբերի 1988 (http://edu.am/index.php/am/news/view/887):

[4] «Կրթութեան Մասին» ՀՀ օրէնք, 1999 յօդուած 24, էջ 11:

[5] Տե՛ս նոյն, յօդուած 5.4., էջ4:

[6] ՀՀ Բարձրագոյն եւ յետբուհական մասնագիտական կրթութեան համակարգը օրէնք, յօդուած 9, Բարձրագոյն եւ յետ բուհական մասնագիտական կրթութեան որակաւորման աստիճանները, ուսուցման ժամկէտները եւ ձեւերը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=25820

[7] Կրթութեան մասին ՀՀ օրէնք, 1999թ., յօդուած 24, էջ 11:

[8] *Բարձրագոյն Կրթութիւն, Պրակ 5*, Կրթութեան ազգային ինստիտուտ, Երեւան, 2012, էջ 230:

[9] *Բոլոնիայի Գործընթացը Հայաստանում*, Ուղեցոյց, Երեւան, էջ 11:

[10] Նոյն, էջ 9:

[11] *Բարձրագոյն կրթութիւն, Պրակ 5*, Կրթութեան Ազգային Ինստիտուտ, Երեւան, 2012, էջ 231:

[12] Նոյն, էջ 232:

[13] Գումարման նպատակն է դիւրացնել կրթութիւնը շարունակելու համար եւրոպական տարածաշրջանի իւրաքանչիւր կողմի ուսումնական հաստատութիւնների ուսանողների մուտքը միւս կողմերի բուհեր եւ բարելաւել եւրոպական տարածաշրջանի որեւէ երկրում ստացած ուսման, ուսման վկայականների, վկայագրերի եւ գիտական աստիճանների փոխադարձ ճանաչման ընթացքը: ՀՀն վաւերացման պայմանով ստորագրել է հռչակագիրը 2000 Մայիսի 26ին՝ Ստրասբուրգում («Յանուն Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրական Դատարանի Որոշումը», 8 Դեկտեմբեր 2004):

[14] Յանուն Հայաստանի Հանրապետութեան սահմանադրական դատարանի որոշումը, Եւրոպական տարածաշրջանում բարձրագոյն կրթութեանը վերաբերող որակատրումների ճանաչման մասին 1997 Ապրիլի 11ին Լիսաբոնում ստորագրուած հռչակագրում (կից յայտարարութեամբ եւ վերապահումով https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=4860):

[15] *Բոլոնիայի Գործընթացում Հայաստանում*, ուղեցոյց, էջ 12-13:

Բոլոնեան գործընթացին մասնակցում է աշխարհի 45 երկիր, այդ թւում՝ ՀՀն, Ադրբեջանը, Վրաստանը, Մոլդովան եւ Ուկրաինան (https://newsarmenia.am/am/news/society/society-20110524-42459967/): Հետաքրքիր է նաեւ ՀՀ անմիջական հարեւանի՝ Վրաստանի փորձն ու գրանցած յաջողութիւնը: Բոլոնիայի գործընթացին Վրաստանը պաշտօնապէս միացել է 2005ին: Որոշումը կայացուել է Բերգէն քաղաքում եւրոպական կրթութեան նախարարների խորհրդաժողովին: Այդպիսով, Վրաստանը պարտաւորւում է երկու տարուայ ընթացքում համալսարանների ուսումնական ծրագրերը համապատասխանեցնել բարձրագոյն կրթութեան եւրոպական չափանիշներին: Բարեյաջող իրականացնելով հաւատարմագրման գործընթացը՝ մշակում է թափանցիկ եւ առարկայական համակարգ՝ դիմորդներին համալսարաններ ներգրաւելու ուղղութեամբ: 2005ին, երբ առաջին անգամ անց են կացւում միասնական քննութիւնները, զգալիօրէն աւելանում է կրթութեան ոլորտի ֆինանսաւորումը: Վրաստանի խորհրդարանն ընդունում է «Բարձրագոյն Կրթութեան» եւ «Ընդհանուր Կրթութեան» մասին օրէնքները՝ հաշուի առնելով կրթութեան ոլորտում կառավարման եւ ֆինանսաւորման ժամանակակից համակարգի ներդրումը: Կարեւորւում է նաեւ այն, որ այս գործընթացը վրացի ուսանողներին փոխանակման ծրագրերի մասնակցութեան, ինչպէս նաեւ՝ արտերկրում բարձրագոյն կրթութիւն ստանալու հնարաւորութիւն տուեց:

[16] *Բարձրագոյն Կրթութիւն, Պրակ 5*, Երեւան, Կրթութեան Ազգային Ինստիտուտ, 2012, էջ 238:

[17] *Հայաստանի Հանրապետութեան Բարձրագոյն եւ Յետբուհական Մասնագիտական Կրթութեան Մասին Օրէնք, 14 Դեկտեմբերի 2004*, էջ 29:

[18] Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան որոշում, 22 Դեկտեմբեր 2005 (http://www.anqa.am/):

[19] Հայաստանի Հանրապետութիւնում բարձրագոյն մասնագիտական կրթութեան երրորդ աստիճանում փորձնական նպատակով կրեդիտային համակարգի ներդրման մասին (ՀՀ կգ նախարարի 14.12.2009թ թիւ 1069-ա/ք հրամանը):

[20] *Կրեդիտային Համակարգով Ուսումնառութեան Ուղեցոյց եւ Դասընթացների Տեղեկագիրքը*, Երեւան, ԵՊՀ, 2009:

[21] Օրինակելի կարգ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման (հաստատուած ՀՀ ԿԳ նախարարի 2007 Յունիսի 19թ թիվ 589-ա/ք հրամանով), 4 էջ:

[22] Նոյն:

[23] *Երեւանի Պետական Համալսարան, Բակալաւրի եւ Մագիստրոսի Կրթական Ծրագրերով Ուսումնական Գործընթացը Կարգաւորող Փաստաթղթեր*, Երեւան, ԵՊՀ, 2019, էջ 15:

[24] Նոյն, էջ 83:

[25] *Կրեդիտային Համակարգով Ուսումնական Գործընթացի Կազմակերպման Կարգ, Հեկտազօրոնի Պատրաստման Կրթական Ծրագիր*, ԵՊՀ, Երեւան 2010, էջ 3:

[26] Նոյն, էջ 4:

[27] ՀՀ բարձրագոյն կրթութեան ոլորտի վիճակը եւ բարեփոխումների ռազմավարական ուղղութիւնները, Զեկոյց, 2018, Դեկտեմբեր, էջ 11:

[28] Նոյն, էջ 12-13:

THE HIGHER EDUCATION REFORMS APPLIED IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE FRAMEWORK OF THE BOLONIA PROCESS (1991-2018)

(Summary)

KRISTINE NADJARYAN
kristnajaryan@gmail.com

Since the proclamation of its independence, the Republic of Armenian has embarked on a reform of its higher education sphere, aiming at integrating the sphere into the European higher education system. This study highlights the stages of this reform process, the application of its details and its implications. The article details the endorsement by Armenia of the Bologna educational process, which eventually led to the transformation of the higher education system in the republic to a system congruent with the norms and system of its European counterpart and eventually its integration into the European Higher Education Space.

The article assesses this continuous process and the advantages it has brought both to the sphere of higher education in the republic and to its graduates.